ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 162

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքով, "Քաղաքաշինության մասին" օրենքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 29/04/2021 թ-ի թիվ 698-Ն հրամանով, հաշվի առնելով Լոռի1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-043-0117-0001 ծածկագրի տակ գտնվող "բնակավայրերի" նպատակային նշանակության հողամասից տարանջատված 1,0417հա հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության 14/04/2004 թ-ի թիվ 457 որոշմամբ սխալմամբ փոխանցված չէ համայնքին, ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի նախագահի 698-Ն հրամանով նշված հողամասի նկատմամբ ճանաչել Լերմոնտովո համայնքի սեփականության իրավունքը:

2.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 30.09.2026 թ-ի թիվ 147 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 163

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-026-0006-0007, 06-026-0006-0010 ԵՎ 06-026-0006-0011 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հովհաննես Գագիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 06-026-0006-0007, 06-026-0006-0010 և 06-026-0006-0011 ծածկագրերի տակ գտնվող անշարժ գույքերը միավորել և տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, Անտառաշեն բնակավայր, 3փ. 3-րդ թիվ 4:

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 164

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին "Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականիապրիլի 10-ի "Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին" թիվ 384-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի "Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին" թիվ 1532-Ն որոշումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռազմական դրության ժամանակ և խաղաղ պայմաններում համայնքի բնակչության և քաղաքացիական պաշտպանությանն(այսուհետ՝ ՔՊ) ուղղված աշխատանքների պլանավորման և կազմակերպման, խոցման օջախներում վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար համայնքապետարանի և կազմակերպությունների հիման վրա ստեղծել՝

1)ՔՊ շտաբ և ՔՊ ծառայություններ, համաձայն հավելված 1-ի,

2)Տարահանման հանձնաժողով, համաձայն հավելված 2-ի

3)ՔՊ կազմավորումներ, համաձայն հավելված 3-ի

2.ՔՊ ծառայությունների ղեկավարներին՝ մինչև 28.01.2027թ. մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ծառայությունների կանոնադրությունները:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
3. Որոշումը հայտարարել ըստ առնչության

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**